ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/68

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 04.06.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/68 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն 04.06.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար պարենային ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Վերոնշված գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ գնահատող հանձնաժողով) 23.04.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 08.05.2018թ. գնահատող հանձնաժողովը շարունակելով աշխատանքները, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 2-րդ չափաբաժնով (զանազան պահեստամասեր (Կարտոֆիլ մաքրող մեքենայի քար)) 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն (2-րդ չափաբաժնով ընկերության կողմից ներկայացրած գնային առաջարկը կազմել է 1 200 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն):

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

10.05.2018թ. Ընկերությունը, սահմանված կարգով և ժամկետում g.vardanyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացրել (ուղարկել) է որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

23.05.2018թ. Ընկերությունը գնահատող հանձնաժողովի կողմից ծանուցվել է, որ 18.05.2018թ. ժամը 11:00-ի տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն «...առաջարկված 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում նշվում է, որ «... հիմքի հատվածում տրամագիծը 290մմ-ից /+-5մմ/ բարձրանալով վերին հատված կարող է հասնել 330մմ», իսկ հրավերով պահանջվում է 325-330մմ տրամագծով քար: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել հայտերի գնահատման նիստը, մասնակցին առաջարկելով համապատասխան ծանուցումը ստանալուց հետո, սահմանված կարգով, մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Շարունակելով ընթացակարգը՝ Հանձնաժողովը 31.05.2018թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 1.2 կետով արձանագրել է, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հանձնաժողովի քարտուղարի էլ. հասցեով չէր ուղարկել պահանջվող փաստաթղթերը, ուստի հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է սույն ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերջինս երաշխավորում է գնումների մասնակիցների հավասարությունը գնման գործընթացում՝ բացառելով այլ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանը և կիրառմանը, այդ թվում՝ խտրականության դրսևորմանը: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովն, օգտվելով իրեն վերապահված հայեցողական իրավունքից, դրսևորել է խտրական վերաբերմունք, մասնավորապես, Ընկերության նկատմամբ: Ավելին, գնահատող հանձնաժողովը գնման գործընթացում չի ապահովել իր հայեցողական իրավունքի միատեսակ կիրառությունը, դրանով իսկ հաստատելով իր կողմից խտրական վերաբերմունքի առերևույթ դրսևորումը՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջները:

Ընկերությունը նշել, որ հրավերի 2-րդ չափաբաժնով Ընկերության կողմից ներկայացված բնութագրում որևէ անհամապատասխանություն չկա:

Այսպես հրավերում նշված է.

- Կարտոֆիլ մաքրող մեքենայի քար, պատրաստված հղկանյութից, տեսքը սկավառակաձև, տրամագիծը 325-330մմ, բարձրությունը 10-40մմ: Նախատեսված է ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի քարը փոխարինելու համար: Մեքենայի քարը փաթեթավորված ստվարաթղթե տուփում: Յուրաքանչյուր տուփում 1 հատ քար: Տուփը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:

Իսկ Ընկերության կողմից առաջարկվել է ոչ թե նմանատիպ կամ համարժեք, այլ նույն ապրանքի ավելի մանրամասն և ճիշտ բնութագիրը, այն է.

- ՄՕԿ-300Մ մակնիշի կարտոֆիլ մաքրող մեքենայի քար՝ արտիկուլ 18.004՝

Նախատեսված է ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի պլաստմասե թափանիվի քարը փոխարինելու համար: Պատրաստված է հղկանյութից, ունի սկավառակաձև տեսք, հիմքն ունի երեք հատ հատուկ փոսիկներ պլաստասե թափանիվին համապատասխան,

մեջտեղում ունի անցք՝ 55 մմ (+/-5մմ), հիմքի հատվածում տրամագիծը 290մմ-ից (+/-5մմ) բարձրանալով վերին հատված կարող է հասնել մինչև 330մմ, ինչը պայմանավորված է ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի պլաստմասե թափանիվի առանձնահատկությամբ, քարի բարձրությունը 10-40մմ: Փաթեթավորված է ստվարաթղթե տուփում: Յուրաքանչյուր տուփում 1 հատ քար: Տուփը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:

Դեռ ավելին, Ընկերությունը իր կողմից ներկայացված հավելված 6.1 ներկայացրել է նաև առաջարկվող ապրանքի նկարները:

Այսպիսով վերոգրյալի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել.

Պատվիրատուին անհրաժեշտ է ձեռք բերել ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի քար:

Ընկերության կողմից առաջարկվել է հենց ՄՕԿ-300Մ մակնիշի կարտոֆիլ մաքրող մեքենայի քար՝ արտիկուլ 18.004 (կից ներկայացվել է արտադրող կազմակերպության պահեստամասերի կատալոգը): Բանն այն է, որ թե ՄՕԿ-300Մ մակնիշի կարտոֆիլ մաքրող մեքենան և թե դրա համար նախատեսված գնման առարկա հանդիսացող քարը արտադրվում են բելառուսական «Տորգմաշ» ԲԲԸ-ի կողմից, այսինքն սխալմունքը կամ այլ ապրանքի առաջարկումը բացառվում է:

Ինչ վերաբերում է Հանձնաժողովի պնդմանը, թե հրավերով պահանջվում է 325-330մմ տրամագծով քար, մինչդեռ առաջարկվել է «... հիմքի հատվածում տրամագիծը 290մմ-ից (+-5մմ) բարձրանալով վերին հատված կարող է հասնել 330մմ», ապա այն հիմնավոր չէ և չի բխում գնման առարկայի նշանակությունից և օգտագործման բնույթից, քանի որ գնման առարկան նախատեսված չէ որևէ այլ սարքավորման համար և ենթակա է շահագործման միայն ՄՕԿ 300Մ կամ ՄՕԿ 150Մ կարտոֆիլ մաքրող մեքենաների կազմում:

Պետք է նշել նաև, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժելը հանգեցրել է նաև վերջինիս գնման գործընթացին մասնակցության իրավունքի խախտմանը, ինչն երաշխավորված է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով, և հանգեցրել է նաև Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի

2-րդ կետի խախտմանը: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովն, օգտվելով իրեն վերապահված հայեցողական իրավունքից, ընկերության նկատմամբ դրսևորել է խտրական վերաբերմունք: Գնահատող հանձնաժողովը ոչ ստանդարտ մոտեցում է ցուցաբերել խախտելով նաև Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված մրցակցային, համաչափ և ոչ խտրական հիմունքներով մրցույթների կազմակերպման սկզբունքները: Մասնավորապես մի դեպքում գնահատող հանձնաժողովը ցանկանում է գնել ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի քարը, մյուս դեպքում պահանջում է պարտադիր կերպով շտկել և ներկայացնել նույն բնութագիրը, որը հայտարարվել է մրցույթի հրավերով՝ ցուցաբերելով կանխակալ և հայեցողական դիրքորոշում: Մինչդեռ Ընկերությունը տեխնիկական բնութագիրը ներկայացրել է ավելի մանրամասն, հստակ նկարագրությամբ և արտադրողի կողմից տրամադրված տեխնիկական պայմաններով: Օրենքի 13-րդ հոդվածով սահմանվում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Տվյալ պարագայում Ընկերությունն ավելի մանրամասն ներկայացրել է նկարագրվող ապրանքի տեխնիկական պայմանները, ապրանքային նշանը, նույնիսկ նկարը: Սակայն հանձնաժողովը կամայական կերպով չի ընդունել ներկայացրած բնութագիրը, դեռ ավելին, «Գնումների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2017թ. մայիս 4-ին ընդունված N 526-Ն որոշման (այսուհետև Կարգ) 67-րդ կետով և Ընթացակարգի հրավերով գնահատող հանձնաժողովը կարող էր ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Իսկ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող էր ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր, ինչպես նաև գնման առարկա հանդիսացող ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի քարը: Մասնավորապես նման

դեպքերում գնահատող հանձնաժողովը կարող էր պարզաբանումներ պահանջել՝ թե մասնակցից, թե այլ պաշտոնական աղբյուրներից: Սակայն տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը անգործության է մատնվել: Գնահատող հանձնաժողովը չի պահպանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետը, այն է, հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Տվյալ պարագայում գնահատումն իրականացվել է կամայական ձևաչափով: Թեև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով շեշտադրվում է այն հանգամանքը, որ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, այդուհանդերձ, հարկ է նկատել, որ գնահատող հանձնաժողովի որոշումը բովանդակային առումով վարչական ակտին բնորոշ ակտ է, քանի որ համապատասխան մասնակցի և պատվիրատուի միջև պայմանագիր կնքելու հարցն ուղղակիորեն պայմանավորվում է այդ որոշմամբ: Հետևաբար՝ համանման հարաբերություններ կարգավորող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքը («Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը») օրենքի անալոգիայով կիրառելի է նաև գնահատող հանձնաժողովի գործունեության նկատմամբ: Ավելին, անգամ անկախ մեջբերված դրույթից և իրավահարաբերության տեսակից (վարչական կամ քաղաքացիաիրավական), տվյալ կոնկրետ իրավահարաբերության յուրաքանչյուր մասնակից իր գործողություններում կաշկանդված է օրենքով կամ այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակով և իր իրավազորության տիրույթից դուրս որևէ գործողություն պետք է որակվի որպես հակաիրավական արարք: Հակառակ դեպքում ստացվում է, որ գնահատող հանձնաժողովը ցանկացած ժամանակ կարող է շրջանցել օրենքն, պահանջել որ միայն հրավերով նշված բնութագիրը պետք է ներկայացվի, այլ ոչ համարժեք կամ մանրամասն նկարագրման տեսքով: Հանձնաժողովն, անտեսելով վերը թվարկված հանգամանքները կարող է ընդունել կամայական որոշումներ, ինչի արդյունքում կարժեզրկվեն այդ հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգող իրավանորմերը՝ վերածվելով հռչակագրային դրույթների և, որպես հետևանք, կձևավորվի անկանխատեսելի

իրավակիրառ պրակտիկա, ինչը հարիր չէ սահմանադրորեն իրավական բնորոշվող պետությանը: Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը պարտավոր էր գնահատումն իրականացնել հաշվի առնելով ներկայացրած ապրանքի բնութագրիչ հատկանիշները: Խնդիրը կայանում է նրանում, որ հանձնաժողովը ընդունել է մի շարք պարամետրերի փոփոխությունները, որոնք բխում են մեկը մյուսից, սակայն անհասկանալի կերպով առանձնացրել և ներկայացրել է ընկերությանը որոշ պարամետրեր, որոնք պարտադիր կերպով ենթակա են փոփոխման: Վերլուծելով վերոգրյալները մեկ համատեքստում, ակնհայտ է, որ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ոչ պրոֆեսիոնալ կերպով, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի պահանջներին հակասող, քանի որ Ընկերությունը ներկայացրել է կոնկրետ այն ապրանքի ավելի մանրամասն տեխնիկական բնութագիրը, որը ցանկանում է Պատվիրատուն ձեռք բերել: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Ընկերությունը՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2018թ. թիվ 5 արձանագրության 1.2 կետով կայացրած որոշումը «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը սույն ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 18.05.2018թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացրած որոշումը «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ:

3. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 31.05.2018թ. թիվ 5 արձանագրության 1.2 կետով կայացրած որոշումը «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը սույն ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ:

4. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին վերագնահատել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից հիշյալ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ներկայացրած տեխնիկական բնութագիրը:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.05.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.06.2018թ. թիվ ԴՎԱ/2092 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով ընթացակարգի մասնակից «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն, ինչի վերաբերյալ Ընկերությանը ծանուցվել է, և համաձայն գործող կարգի, առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին չի ուղարկել պահանջվող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշում է կայացրել Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.05.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/68 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/68 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պարենային ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

ՉՉ/Հ	*Չափաբաժնի անվանումը*
2 զանազանպա հեստամասեր (Կարտոֆիլ մաքրող մեքենայի քար)	Կարտոֆիլ մաքրող մեքենայի քար, պատրաստված հղկանյութից, տեսքը սկավառակաձև, տրամագիծը 325-330մմ, բարձրությունը 10-40մմ: Նախատեսված է ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի քարը փոխարինելու համար: Մեքենայի քարը փաթեթավորված ստվարաթղթե տուփում: Յուրաքանչյուր տուփում 1հատ քար: Տուփը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն:

4. «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով ընթացակարգի հայտի N 6.1 հավելվածով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/Հ	անվանումը	Տեխնիկական բնութագիրը
2	ՄՕԿ-300Մ մակնիշի կարտոֆիլ մաքրող մեքենայի քար	ՄՕԿ-300Մ մակնիշի կարտոֆիլ մաքրող մեքենայի քար՝ արտիկուլ 18.004* Նախատեսված է ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի պլաստմասե թափանիվի քարը փոխարինելու համար: Պատրաստված է հղկանյութից, ունի սկավառակաձև տեսք, հիմքը ունի երեք հատ հատուկ փոսիկներ պլաստասե թափանիվին համապատասխան, մեջտեղում ունի անցք՝ 55 մմ (+/-5մմ), հիմքի հատվածում տրամագիծը 290մմ-ից (+/-5մմ) բարձրանալով վերին հատված կարող է հասնել մինչև 330մմ, ինչը պայմանավորված է ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի պլաստմասե թափանիվի առանձնահատկությամբ, քարի բարձրությունը 10-40մմ: Փաթեթավորված է ստվարաթղթե տուփում: Յուրաքանչյուր տուփում 1հատ քար: Տուփը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ 24.05.2018թ. գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման ընթացքում արձանագրել է, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և 24.05.2018թ. Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով կայացված որոշմամբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլ. հասցեին չի ուղարկել պահանջվող փաստաթղթերը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի 04.06.2018թ. բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 11.06.2018թ. թիվ ԴՎԱ/2092 գրությունը և կից փաստաթղթերը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով

ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պարենային ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

ՀՀ/Հ	*Չափաբաժնի անվանումը*

2 զանազանպա հեստամասեր (Կարտոֆիլ մաքրող մեքենայի քար)	Կարտոֆիլ մաքրող մեքենայի քար, պատրաստված հղկանյութից, տեսքը սկավառակաձև, տրամագիծը 325-330մմ, բարձրությունը 10-40մմ: Նախատեսված է ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի քարը փոխարինելու համար: Մեքենայի քարը փաթեթավորված ստվարաթղթե տուփում: Յուրաքանչյուր տուփում 1հատ քար: Տուփը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, որին սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը և կից իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի, ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի N 6.1 հավելվածով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/Հ	անվանումը	Տեխնիկական բնութագիրը
2	ՄՕԿ-300Մ մակնիշի կարտոֆիլ մաքրող մեքենայի քար	ՄՕԿ-300Մ մակնիշի կարտոֆիլ մաքրող մեքենայի քար՝ արտիկուլ 18.004* Նախատեսված է ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի պլաստմասե թափանիվի քարը փոխարինելու համար: Պատրաստված է հղկանյութից, ունի սկավառակաձև տեսք, հիմքը ունի երեք հատ հատուկ փոսիկներ պլաստասե թափանիվին համապատասխան, մեջտեղում ունի անցք՝ 55 մմ (+/-5մմ), հիմքի հատվածում տրամագիծը 290մմ-ից (+/-5մմ) բարձրանալով վերին հատված կարող է հասնել մինչև 330մմ, ինչը պայմանավորված է ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի պլաստմասե թափանիվի առանձնահատկությամբ, քարի բարձրությունը 10-40մմ: Փաթեթավորված է ստվարաթղթե տուփում: Յուրաքանչյուր տուփում 1հատ քար: Տուփը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ 24.05.2018թ. գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման ընթացքում արձանագրել է, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին: Մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշվում է, որ «... հիմքի հատվածում տրամագիծը 290 մմ-ից (+/-5մմ) բարձրանալով վերին հատված կարող է հասնել մինչև 330մմ», իսկ հրավերով պահանջվում է 325-330մմ տրամագծով քար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և 24.04.2018թ. Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մինչև կասեցման

ժամկետի ավարտը արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով կայացված որոշմամբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլ. հասցեին չի ուղարկել պահանջվող փաստաթղթերը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 2-րդ չափաբաժնի մասով, «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի՝ Ընթացակարգի հրավերի N 6.1 հավելվածով ներկայացրած տեխնիկական բնութագիրը, հայտնում եմ հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է ձեռքբերել ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի համար նախատեսված քար: Համաձայն համացանցում առկա տեղեկատվության ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենան արտադրվում է բելառուսական «Տորգմաշ» ընկերության կողմից: Ընթացակարգի տեխնիկական բնութագրով նախատեսվել է, որ գնման առարկա ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի քարի տրամագիծը պետք է լինի 325-330մմ: «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է ՄՕԿ-300Մ մակնիշի կարտոֆիլ մաքրող մեքենայի քար՝ արտիկուլ 18.004, տրամագիծը 290մմ-ից (+/-5մմ) բարձրանալով վերին հատված կարող է հասնել մինչև 330մմ:

Ուսումնասիրելով բելառուսական «Տորգմաշ» ընկերության պաշտոնական կայքում առկա՝ վերջինիս կողմից արտադրվող ՄՕԿ-300Մ կարտոֆիլ մաքրող մեքենայի մաս հանդիսացող և նույնպես «Տորգմաշ» ընկերության կողմից արտադրվող քարի տեխնիկական բնութագիրը, գտնում եմ, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի 6.1 հավելվածով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին: Մասնավորապես՝ հրավերով նախատեսվել է ձեռքբերել ՄՕԿ-300Մ մոդելի

կարտոֆիլ մաքրող մեքենայի քար: Ընկերության կողմից ներկայացվել է ՄՕԿ-300Մ մակնիշի կարտոֆիլ մաքրող մեքենայի քար՝ արտիկուլ 18.004: Վերջինս նախատեսված է հենց ՄՕԿ-300Մ, ինչպես նաև ՄՕԿ 150Մ մոդելի կարտոֆիլ մաքրող մեքենաների համար և արտադրվում է ՄՕԿ-300Մ մոդելի կարտոֆիլ մաքրող մեքենա. արտադրող կազմակերպության կողմից կոնկրետ նշված մոդելի կարտոֆիլ մաքրող մեքենայի համար: Ընդ որում՝ ՄՕԿ-300Մ մոդելի կարտոֆիլ մաքրող մեքենան ունի հստակ պարամետրեր, ուստի վերջինիս համար նախատեսված մասերը նույնպես ունեն ստանդարտ տեխնիկական հատկանիշներ:

Պատվիրատուն նշել է, որ հրավերով պահանջվում է 325-330մմ տրամագծով քար, մինչդեռ Ընկերության կողմից առաջարկվել է քար, որի տրամագիծը 290մմ-ից (+/-5մմ) բարձրանալով վերին հատված կարող է հասնել մինչև 330մմ: Այս առումով հայտնում եմ, որ Ընկերության ներկայացրած ապրանքը սույն մասով համապատասխանում է հրավերով պահանջվող գնման առարկայի տեխնիկական բնութագրին, մասնավորապես բխում է գնման առարկայի նշանակությունից և օգտագործման բնույթից, քանի որ գնման առարկան նախատեսված չէ որևէ այլ սարքավորման համար և ենթակա է շահագործման միայն ՄՕԿ 300Մ կամ ՄՕԿ 150Մ կարտոֆիլ մաքրող մեքենաների կազմում, որն էլ անհրաժեշտ է Պատվիրատուին:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից ի սկզբանե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է հրավերով նախատեսված գնման առարկայի տեխնիկական հատկանիշներին համապատասխանող ապրանքի տեխնիկական բնութագիր, ուստի սույն բողոքի շրջանակներում վիճարկվող հիմքի կապակցությամբ առկա չէր Կարգի 47-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար նախատեսված ընթացակարգը կիրառելու անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից, գտնում եմ, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 04.06.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 18.05.2018թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացրած որոշումը «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրում անհամապատասխանություն արձանագրելու վերաբերյալ,

2. դադարեցնել 31.05.2018թ. թիվ 5 արձանագրության 1.2-րդ կետով կայացրած որոշումը «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ,

3. վերագնահատել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ